

Խառը թվերի բազմապատկումը

Խառը թվերը բազմապատկելու համար անհրաժեշտ է խառը թվերը գրի առնել անկանոն կոտորակների տեսքով ու բազմապատկել ստացված կոտորակները, արդյունքը գրի առնել խառը թվի տեսքով:

Օրինակ`

$$2\frac{5}{6} \cdot 7\frac{1}{3} = \frac{17}{6} \cdot \frac{22}{3} = \frac{17 \cdot 22}{6 \cdot 3} = \frac{17 \cdot 11}{3 \cdot 3} = \frac{187}{9} = 20\frac{7}{9}$$

Առաջադրանքներ

- Կատարեք խառը թվերի բազմապատկում:

$$12\frac{5}{12} \cdot 7\frac{2}{3} =$$

$$2\frac{5}{12} \cdot 1\frac{5}{6} =$$

$$3\frac{23}{24} \cdot 1\frac{3}{4} =$$

$$14\frac{3}{7} \cdot 11\frac{2}{5} =$$

$$12\frac{3}{25} \cdot 6\frac{2}{100} =$$

$$9\frac{2}{11} \cdot 5\frac{2}{3} =$$

$$9\frac{8}{10} \cdot 5\frac{2}{3} =$$

$$20\frac{3}{18} \cdot 1\frac{5}{12} =$$

$$20\frac{3}{36} \cdot 8\frac{7}{24} =$$

- Աստղանիշի փոխարեն ի՞նչ թիվ գրելու դեպքում կստացվի հավասարություն:

$$* : 1\frac{2}{5} = 4\frac{6}{7}$$

$$* : 8\frac{3}{10} = 9\frac{3}{5}$$

$$* : 11\frac{2}{9} = 15\frac{4}{7}$$

- Ուղղանկյան երկարությունը 2 անգամ մեծ է նրա լայնությունից, հաշվեք ուղղանկյան մակերեսը, եթե նրա լայնությունը $5\frac{3}{7}$ դմ է: